

նախ Լ. Շանթ բնաւ ուշադրութեան առած չէ նաեւ այն կարեւորութիւնը, որ Թուրքիան ներքին կամ արտաքին ճնշող դրդապատճառներով կրնայ Սորհրդային Հանրապետութիւն մը դառնալ եւ բոլշեւիկեան Ռուսաստանի իւրաքանչեւ մեթոտներով, նոր արկածախնդրութիւններու դիմել:

Իմ կարծիքով ուսում-թրքական բարեկամութեան խնդիրը քննուած է հին չրջանի ըմբռնումներով, ինչ որ բնաւ չի պատշաճիր բոլշեւիզմի ստեղծած նոր կացութեան: Կարծես թէ Լ. Շանթն ալ իւրացուցած է ժողովրդական այն ըմբռնումը, թէ Թուրք-բոլշեւիկեան բարեկամութիւնը անուանական է եւ թէ այդ երկու պետութիւնները ըստ էութեան կը մնան թշնամի:

Այդ առթիւ փոքրիկ հատուած մը Լ. Շանթի գրքէն. —

«Ինչպէս ամբողջ Թուրք-բոլշեւիկ բարեկամութիւնը, այնպէս ալ մասնաւորապէս բոլշեւիկներու բրած հողային զիջումները Թուրքիային մինչեւ Արփա-Չայ, ի հարկէ, զուրկ են լրջութենէ: Օրուան համար ընդունուած կարգադրութիւններ են անոնք, մինչեւ որ իրերը ստանան իրենց բնական ընթացքը»: (Էջ 186):

Ի հարկէ, այս հողային զիջումները զուրկ չեն լրջութենէ, որովհետեւ ատոնք տեղի կ'ունենան յեղափոխութեան տարածման ի խնդիր: Հողը կարեւորութիւն չունի բոլշեւիզմի համար. ան օգտադրօժութիւնը ժողովուրդը եւ իր յեղափոխական մտայնութիւնը տարածող միջավայր կը փնտռէ:

Աւելի վար Լ. Շանթ կը շարունակէ. —

«Եւ եթէ բոլշեւիկները քիչ մը աւելի երկար դիմանան իրենց գահի վրայ, որ ժամանակ ստանան իրերը հասունանալու եւ Թուրքերը քիչիկ մը աւելի կապուին Անգլիային, մենք կըրնանք ականատես ըլլալ զուարճալի տեսարանի մը: Հայերու եւ յոյներու իմպերիալիզմին դէմ Թուրքերը պաշտպանելէն ետքը, բոլշեւիկները յանկարծ կրնան դառնալ հայկական հարցի պաշտպան Թուրքերուն դէմ»: (Էջ 187):

Շատ յաճախ անգլո-թրքական մօտեցման մասին կը խօսուի: Դեռ մէկ ամիս առաջ էր, որ հրատարակուեցաւ մեծ աղմուկով Չէմբըր-

լէնի մէկ դաշտին ծրագիրը, որ նպատակ ունի եղեր Թուրքիան Սովետներէն բաժնել, եւ խոշոր պետութիւններու համախմբում մը ըստեղծել Ռուսաստանի դէմ: Բայց ինծի կը թըռի, հին կարգը, կամ հաւասարակշռութիւնը վերականգնած տեսնելու, հին արտայայտութիւն է այս, եւ իրողութիւն դառնալու տրուեալներ չունի: Մինչդեռ միջադպային մեծ շրջանակէն երբ մեր նեղ շրջանակին կ'անցնինք, կը տեսնենք, որ այդպիսի ըմբռնում մը կը մղէ հայերը անորոշ ժամանակով օրօտել բոլշեւիկեան օրինաւորացիայով, յոյս սնուցանելով, թէ օր մը բոլշեւիկեան սուրը պիտի չողջողայ Թուրքին դէմ, ինչ պատճառով ալ որ ըլլայ:

Այս կացութեան հակառակ, չորհրդի եւրոպական հակամարտութեանց, չկայ որեւէ պետութիւն, որ կրնար այնքան երաշխաւորել Թուրքիոյ ամբողջութիւնը, որքան բոլշեւիկեան Ռուսաստանը այդ բրաւ եւ կարող է ընել, եւ անէր Թուրքիան իր ձեռքին մէջ գործածելու ընդդէմ Ռուսաստանին:

Ռուսաստանի գլխաւոր հակամարտ ուժը Անգլիան է, որ իր տիեզերական քաղաքականութիւնը կը տանի գերազանցապէս ջուրերու վրայ, մինակ. իսկ երբ կը մօտենայ եւրոպական խնդիրներուն եւ Մերձասոր Արեւելքին, հարկադրուած է իր ետեւէն քաշել Իտալիան, Գրանասն եւ Նոյնիսի չարք մը փոքր պետութիւններ: Չմոռնանք այս իրողութեան վրայ աւելցնել նաեւ այն, որ Անգլիային սկսած մինչեւ ամենէն փոքրիկ ուժը, (հայկական), Թուրքիոյ մօտեցած պարագային, անկէ պատու մը առնելու անդիմադրելի ձգտումն ունին:

Այս իրողութիւնը շատ լաւ կը դիտակցի Թուրքիան եւ որեւէ շահ չունի միանալու Եւրոպային իրեն կասկածած ձեռքերուն՝ Ռուսաստանի դէմ գործելու համար: Մանաւանդ որ արեւմտեան ուժերուն միանալու պարագային Թուրքիան պիտի հանդիսանայ առաջինը չազանակը ռուսական կրակէն հանելու, երբ իր կոնակէն երկրի բաժանումը կրնայ կարգադրուիլ:

Հարց կարող է ծագիլ թէ Ռուսաստանը չի կրնար տեսնապէս եւ քաղաքակրթապէս